լերին նստէին սոքա, ի ժամու՝ յորում մեռաւ սուրբն Ներսէս, տեսանէին սոքա յիւրաքանչիւր լեառնէ աչաւք բացաւք ի տուընջեան ժամու զայրն Աստուծոյ զՆերսէս իբրեւ յամպս յափշտակեալս, զի հրեշտակք Աստուծոյ տանէին զնա ի վեր, եւ գունդք գունդք գային նմա առաջի: *3* Իբրեւ տեսին զայս տեսիլ անապատաւորքն, զարմացեալք ընդ գործն ընդ այնս. բայց Շաղիտայն՝ որ էրն յԱռեւծ լերինն՝ քանզի էր հմուտ այր, գիտաց եթէ հանգուցեալ է սուրբն Ներսէս, եւ այն ոգիք նորա երեւին նմա. բայց Եպիփան եդ ի մտի իւրում, թէ մարմնով իցէ յափշտակեալ զնա: *4* Ապա յարեան յիւրաքանչիւր լեռնէ՝ ընթացեալք փութով մինչեւ յԵկեղեաց գաւառ, եկին քննեցին տեսին զի կատարեալ էր սուրբ հայրապետն Ներսէս. եւ եկին մինչեւ ի Թիլոյ գեւղն, եւ տեսին զտեղին՝ յորում եդեալ էր զնա. եւ դիպեալք միմեանց արքն հաւատարիմք, պատմէին միմեանց զոր ինչ տեսինն՝ առաջի ժողովրդոցն: *5* Բայց էին արքն այն հրեշտակակրաւնք, յանապատին սնեալք եւ կեցեալք. զի եւ կարաւղք էին նշանս առնել մեծամեծս, եւ ամենեցուն գիտելի եւ ծանաւթք էին գործք նոցա:

ԳԼՈՒԽ ԻԶ.

1 Յաղագս սրբոյն Շաղիտայի:

2 Շաղիտայս, այր սուրբ, էր լեալ աշակերտ մեծին Դանիէլի. եւ ի տղայութենէ իւրմէ սնեալ էր համակ յանապատս, եւ ընդ անապատաւորս խոտաճարակ լեալ էր: *3* Եւ յետ հանգստեան սրբոյն Ներսիսի գնաց չոգաւ ի գաւառն Կորդուաց, եւ առնէր նշանս եւ սքանչելիս, եւ բնակէր ի մէջ առիւծուց. աւելի քան զքսան առեւծ հանապազ շրջէին ընդ նմա հանապազորդեալք[1]: *4* Էր զի լինէր՝ զի յորժամ ցաւ ինչ ցաւէր գազանացն, գային շուրջ պատէին զնովաւ, եւ ձգձգէին զՇաղիտայն, եւ նշանաւ առնէին խնդրել զբժշկութիւն: *5* Եւ էր երբեմն՝ զի առեւծ մի մեծ, եւ էր ելեալ եղէգն ընդ թաթուլ բազկին առիւծոյն, եւ եկն առեւծն առ սուրբն Շաղիտայն ի լեառնն՝ յորում նստէր. եւ զաւրէն մարդոյ ի վեր առեալ զթաթուլն՝ ցուցանէր նմա զվէրն, նշանացէր նմա բժշկել զինքն: *6* Իսկ սուրբն Շաղիտա հանէր զեղէգն՝ որ ընդ վէրն մտեալ էր, եւ թքանէր ի վէրն, եւ թաշկինակաւն՝ զոր ընդ գլուխն իւր էր ածեալ՝ հանեալ պատէր զթաթ առիւծուն եւ բժշկէր:

7 Եւ այսպէս բիւրապատիկ եւ պէսպէս առնէր զսքանչելիս: *8* Եւ գազանք էին կենաց կցորդ նորա, մինչ շրջէր նա յանապատս զամենայն աւուրս կենաց իւրոց: *9* Եւ ի գետ իբրեւ հասանէր, կաւշկաւքն անցանէր ի վերայ ջուրցն գետոցն, եւ ոչ թանային կաւշիկք նորա: *10* Եւ յորժամ ի շէն ուրեք իջանէր, զբազում մոլորեալս դարձուցանէր նշանաւք եւ արուեստիւք:

1 *Ի միում օրինակի չիք՝* հանապազորդեալք